Հաստատում եմ
Հայաստանի շախմատի ֆեդերացիայի
նախագահի առաջին տեղակալ՝ Ս.Լպուտյան

2025թ. «27» «մարտի»

Հայաստանի պատանիների և աղջիկների 2025թ. առաջնության

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Առաջնության կազմակերպիչը.

Հայաստանի պատանիների և աղջիկների 2025թ. առաջնության եզրափակիչ մրցաշարերի կազմակերպիչն է Հայաստանի շախմատի ֆեդերացիան:

Անցկացման նպատակը.

Հայաստանի պատանիների և աղջիկների 2025թ. առաջնության եզրափակիչ մրցաշարերի անցկացման նպատակն է 8-18 տարեկան տարիքային խմբերի 2025թ. չեմպիոններին և մրցանակակիրներին որոշելը: Մրցաշարը հանդիսանում է ընտրական փուլ՝ Եվրոպայի և աշխարհի պատանիների և աղջիկների առաջնությունների համար:

Անցկացման վայրը.

Հայաստանի պատանիների և աղջիկների 2025թ. առաջնության եզրափակիչ մրցաշարերը կանցկացվեն Հայաստանի շախմատի ակադեմիայում (հասցե՝ Շևչենկո 34, ք. Երևան, Հայաստան,հեռ. +374 10/99440105):

Անցկացման ձևաչափը.

Առաջնությունն անցկացվում է հետևյալ տարիքային խմբերով.

- մինչև 8 տարեկան տղաներ
- մինչև 10 տարեկան տղաներ և աղջիկներ
- մինչև 12 տարեկան տղաներ և աղջիկներ
- մինչև 14 տարեկան պատանիներ և աղջիկներ
- մինչև 16 տարեկան պատանիներ և աղջիկներ
- մինչև 18 տարեկան պատանիներ և աղջիկներ

Առաջնությունն անցկացվում է ՖԻԴԵ-ի շախմատի կանոնների համաձայն՝ շրջանային մրցակարգով: Մ8, Մ10 և Մ12 տարեկան տղաների խմբերի մրցաշարերը, Մ10 և Մ12 տարեկան աղջիկների խմբերի մրցաշարերը անցկացվում են 12 մասնակիցներով, Մ18 տարեկան աղջիկների խումբը ***շվեյցարական*** մրցակարգով՝ ***9 խաղափուլով***, մնացած տարիքային խմբերի մրցաշարերը 10 մասնակիցներով:

Ժամակարգը.

Յուրաքանչյուր մասնակցին տրվում է 90-ական րոպե մինչև պարտիայի ավարտը յուրաքանչյուր քայլի համար 30 վայրկյան հավելումով՝ սկսած առաջին քայլից:

Հաղթողների որոշման կարգը.

Մրցաշարում տեղերը բաշխվում են համաձայն հավաքած առավելագույն միավորների: Հավասար միավորներ վաստակելու դեպքում բոլոր տարիքային խմբերում, բացառությամբ Մ18 տարեկան աղջիկների խմբի, տեղերը կորոշվեն հետևյալ լրացուցիչ ցուցանիշներով.

1. ըստ Զոնեբորն-Բերգերի համակարգի,
2. ըստ անձնական հանդիպման (հանդիպումների) արդյունքի,
3. ըստ սև գույնի խաղաքարերով խաղացած պարտիաների առավելագույն քանակի,
4. ըստ հաղթանակների առավելագույն քանակի:

Մ18 տարեկան աղջիկների մրցաշարում հավասար միավորներ վաստակելու դեպքում տեղերը կորոշվեն հետևյալ լրացուցիչ ցուցանիշներով.

1. Հատված Բուհգոլցով
2. Բուհգոլցով
3. Սև գույով խաղացած պարտիաների առավելագույն քանակի
4. Հաղթանակների առավելագույն քանակի

Առաջնության անցկացման ժամկետները և ֆինասավորումը.

Հայաստանի պատանիների և աղջիկների առաջնության եզրափակիչ մրցաշարերը կանցկացվեն ս.թ. ապրիլի 13-ից 24-ը:
Մրցաշարի բացումը՝ ապրիլի 14-ին ժամը 14:30-ին:

Մրցաշարի ընթացքում մարզերը (30կմ և ավել) ներկայացնող մարզիկների սննդի և գիշերակացի, բժշկի սննդի, մրցավարների սննդի և գիշերակացի ֆինասավորումը կատարվում է՝ ըստ Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 14-ի N 1563-Ն որոշման՝ ԿԳՄՍ «Պետական աջակցություն մարզական ֆեդերացիաներին» ֆինանսական միջոցների հաշվին:

Մրցաշարում մրցանակային տեղեր զբաղեցրած մասնակիցների մեդալները, պատվոգրերը և դրամական պարգևատրումները իրականացնում է Հայաստանի շախմատի ֆեդերացիան:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ապրիլի 14-ին մեկնարկելու է մինչև 8տ, 10տ., 12տ. տղաների և 10տ., 12տ. աղջիկների մրցաշարերը: Մյուս տարիքային խմբերի 1-ին խաղափուլը կմեկնարկի ապրիլի 15-ին: Խաղից ուշանալու թույլատրելի ժամանակը սահմանվում է 30 րոպե:

Խաղասրահ չի թույլատրվում ներկայանալ բջջային հեռախոսներով և այլ էլեկտրոնային սարքերով: Խաղի ընթացքում մասնակցի մոտ էլեկտրոնային սարքեր հայտնաբերվելու դեպքում, համաձայն ՖԻԴԵ-ի կանոնների, կգրանցվի պարտություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ԵՎ ԱՂՋԻԿՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

13 – 24 ԱՊՐԻԼԻ, 2025Թ.

Ժամանակացույց

Մինչև 8, 10, 12 տարեկան պատանիներ և 10, 12 տարեկան աղջիկներ.

13 ապրիլի – ժամանման օր	
14 ապրիլի – բացման արարողություն	14:30
14 ապրիլի – 1 տուր	15:30
15 ապրիլի – 2 տուր	15:00
16 ապրիլի – 3 տուր	11:00
16 ապրիլի – 4 տուր	16:00
17 ապրիլի – 5 տուր	15:00
18 ապրիլի – 6 տուր	15:00
19 ապրիլի – 7 տուր	15:00
20 ապրիլի – 8 տուր	15:00
21 ապրիլի – 9 տուր	15:00
22 ապրիլի – 10 տուր	15:00
23 ապրիլի – 11 տուր	11:00
23 ապրիլի – փակման արարողություն	16:30
24 ապրիլի – մեկնման օր	

Մինչև 14, 16, 18 տարեկան աղջիկներ և պատանիներ

14 ապրիլի – բացման արարողություն	14:30
15 ապրիլի – 1 տուր	15:00
16 ապրիլի – 2 տուր	15:00
17 ապրիլի – 3 տուր	15:00
18 ապրիլի – 4 տուր	15:00
19 ապրիլի – 5 տուր	15:00
20 ապրիլի – 6 տուր	15:00
21 ապրիլի – 7 տուր	15:00
22 ապրիլի – 8 տուր	15:00
23 ապրիլի – 9 տուր	11:00
23 ապրիլի – փակման արարողություն	16:30
24 ապրիլի – մեկնման օր	